Ստեփանոս Ա-ն, ինչպէս երևում է, 1490 թուականին է գնացել Հռոմ, որովհետև այդ թուականի տակ Ռոշքան, Գալուստ Ստեփանեանի մասին խօսելիս, ասում է. «Սա (Գալուստ), որպէս թուի, երթալով Ստեփաննոսի արքեպիսկոպոսին ի Հռոմ, նստի փոխանակ նորա մինչև նա դարձաւ ի Հռոմայ»[47]։

Թէ ե՛րբ էր վերադարձել Հռոմից Ստեփանոսը, այդ մասին խօսք չկայ Ռոշքայի մօտ եւ ոչ էլ այն մասին, թէ որքա՛ն էր տեւել Ստեփանոսի առաջնորդական իշխանութիւնը. միայն 1535 թուականի տակ Ռոշքան մի վերջին անգամ եւս յիշատակում է նրան՝ գրելով. «Ստեփաննոս արքեպիսկոպոսն Լէոպոլսի յայսմ ամի կենդանի էր»[48] եւ այս տեղեկութեան որպէս աղբիւր ցոյց է տալիս՝ «Եզու. Հէրպ.» (Benedictus Herbest, jesuita)։ Դրանից յետոյ Ռոշքան այլեւս չի խօսում նրա մասին եւ տեղեկութիւն չունի նաեւ նրա մահուան ժամանակի վերաբերեալ։

Պէտք է նշել, որ լեհական պատմագրանները ճշգրիտ տեղեկութիւններ ընդհանրապէս չունեն Ստեփանոս Ա-ի մահուան թուականի մասին, բայց նրանցից ոմանք, որպէս թէ հիմնուելով Ռոշքայի ժամանակագրութեան վրայ եւ կամ նրա անուղղակի ազդեցութեան տակ, համարում են, որ Ստեփանոս Ա-ի իշխանութեան վերջը եւ նրա մահը տեղի է ունեցել 1492 թուականին. այդպէս են համարում Բարոնչը, Լեխիցկին, Օբերտինսկին եւ այլն[49]։ Այդպէս է ընդունում եւ Պետրովիչը[50]։ Եւ սակայն՝ խնդիրն այն է, որ այդ կարծիքն արտայայտող կամ յուշող տուեալ չկայ Ռոշքայի ժամանակագրութեան մէջ։ 1492 տարեթուի տակ Ռոշքան առհասարակ ոչ մի դէպք չի արձանագրում եւ ոչ էլ Ստեփանոս Ա-ի անունն է յիշատակում[51]։

Այդ ժամանակագրութեան մէջ, 1485 եւ 1490 տարեթուերի տակ, ամբողջ ասուածն այն է միայն, որ Ստեփանոս արքեպիսկոպոսը 1490 թուականին Հռոմ է գնացել, իսկ յետոյ, յայտնի չէ, թէ ե՛րբ, մահացել է Լուովում, ինչպէս ցոյց է տալիս նրա կտակը[52]։ Առանց ասելու, թէ ե՛րբ է վերադարձել Հռոմից եւ ե՛րբ է մահացել նա, Ռոշքան գրում է. «Դարձեալ՝ ի Լէոպոլիս վախճանի. Իւր կտակն այսպէս»։ Այստեղ դարձեալ բառը չի նշանակում դառնալով, այսինքն՝ Հռոմից դառնալով, այլ՝ նորից, այսինքն՝ ըստ մի ուրիշ տեղեկութեան, հետեւաբար՝ ըստ մի ուրիշ տեղեկութեան նա մեռնում է Լուովում, իսկ այդ տեղեկութեան աղբիւրը նոյնինքն Ստեփանոսի կտակն է, որի թուականը չի նշուած։

Եւ իրօք, ճիշտ կշռադատելով Ռոշքայի գրանցած տուեալները, դժուար չէ նկատել, որ Ստեփանոս Ա-ը Հռոմի ուղեւորութիւնից յետոյ վերադարձել էր Լուով եւ նրա մահն այնտեղ էր տեղի ունեցել, իսկ մինչեւ մահանալը նա դեռ կենդանի էր 1535 թուականին[53]։ Ուրեմն՝ սխալ է նրան մեռած համարել 1492 թուականին՝ «յենուելով» Ռոշքայի վրայ։ Այդ թուականից յետոյ Ստեփանոսը դեռ երկար է ապրել Լուովում։

Մեր փաստարկումների հետեւութիւնն այն չէ, թէ Ստեփանոս Ա-ը 1490-ական թուականներին Լուով վերադառնալուց յետոյ նորից է բռնել առաջնորդական աթոռի վրայ։ Ո՛չ. եւ ընդհակառակն։ Պատմական փաստերն ասում են, որ այդ շրջանում, Գալատի փոխանորդական կարճ իշխանութիւնից (1490–1491° թթ.) յետոյ,

---

47 Անդ, էջ 160։ Ըստ այսմ՝ Գալուստը առաջնորդական փոխանորդ էր նշանակուել։ Նա հետագայում, 1515/16 թուականներին, ընտրուել է թեմական առաջնորդ. հմմտ. PChA p. 78-79։

48 Սա. Ռոշքա, էջ 163։

49 S. Baracz, «Rys dziejo'w orm'an'skich», s. 109; Cz. Lechicki, «Kos'ciól ormian'ski w Polsce»- Lwo'w, 1928, s. 40; S. Obertyn'ski, «Die florentiner Uni n der polnischen Armenier und ihr Bischopska ałog», *Orientalia Christiana*, Roma, vol. XCVI, 1934, S. 32-33; «Schematismus Archidioecesis Leopoliensis ritus armeno-catholici pro anno Domini 1936», Leopoli, p. 10. Հմմտ. PChA p. 75-76.

50 Հմմտ. PChA p. 74-77.

51 Հմմտ. Սա. Ռոշքա, էջ 161։

52 Անդ, էջ 160։

53 Անդ, էջ 163։